

ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԳԱՍՏԻԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 2: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ
SECTION 2: TEACHING AND UPBRINGING

UDC 37.033
DOI 10.46991/educ-21st-century.v7.i2.065

ԿԱՆԱԶ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հովհաննիսյան Մերի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ գիտական քարտուղար,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն,
meri.hovhannisyan@ysu.am
<https://orcid.org/0000-0002-7467-7087>

Ամփոփում

Հետազոտության նպատակներն են սահմանել ու վերլուծել կրթական արդի համակարգի կարևորագույն ուղղություններից մեկի՝ կանաչ կրթության առանձնահատկությունները: Մեր ուսումնասիրության խնդիրներն են բացահայտել կանաչ կրթության էությունը, առավելությունները, ուսումնական գործընթացում դրսևորվող մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Թեմայի շրջանակում առաջադրված խնդիրների համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ընդհանուր՝ տրամաբանական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ՝ վերլուծության, համեմատության մեթոդներ:

Կատարելով ուսումնասիրությունը՝ հանգել ենք այն եզրակացության, որ կանաչ կրթությունը յուրահատուկ մոտեցում է ուսումնական գործընթացում, որի նպատակն է ձևավորել բնապահպանական գիտակցություն, պատասխանատվություն ու կայուն զարգացման մշակույթ: Այն ձգտում է սովորողներին տալ ոչ միայն տեսական գիտելիքներ կրթության բնության ու շրջակա միջավայրի մասին, այլև ձևավորել արժեքներ ու վարքագիծ, որոնք կնպաստեն բնության պահպանությանն ու բնական ռեսուրսների խելամիտ օգտագործմանը: Կանաչ կրթությունը միավորում է մանկավարժությունը, բարոյագիտությունը, առհասարակ գիտությունն ու քաղաքացիական պատասխանատվությունը առողջ ու կայուն ապագայի նկատմամբ:

Կրթական այս մոտեցումը միջառարկայական է. ընդգրկելով մի շարք առարկաներ՝ նպաստում է նաև քննադատական մտածողության զարգացմանը: Կանաչ կրթությունը կարևորում է բնության հետ շփումն ու բնապահպանական նախաձեռնությունները: Ասել է թե՛ կանաչ կրթությունը ոչ միայն գիտելիքի փոխանցման գործընթաց է, այլև արժեքային ու վարքային փոփոխության կարևոր նախադրյալ ու հիմք՝ նպաստելով կայուն հասարակության ձևավորմանը:

***Բանալի բառեր՝** կանաչ կրթություն, ուսումնական գործընթաց, բնապահպանական գիտելիք, բնապահպանական կրթություն, շրջակա միջավայր, կայուն զարգացում, ուսուցման մեթոդ, համագործակցային ուսուցում, հետադարձ կապ:*

Համառոտ ներածական: Ներկայումս աշխարհը բախվում է բնապահպանական լուրջ մարտահրավերների՝ կլիմայական փոփոխություններից մինչև բնական ռեսուրսների սպառում: Հենց դրանով էլ պայմանավորված՝ կրթական համակարգում երևան եկավ մի նոր ուղղություն՝ կանաչ կրթությունը, որի նպատակն է ձևավորել պատասխանատու քաղաքացի, որը գիտակցաբար է վերաբերվում շրջակա միջավայրին ու բնությանը: Երբ հասարակությունը սկսեց բախվել օդի, ջրի ու հողի աղտոտմանը, անտառահատումներին, այդ համապատկերում ընդգծվեց, որը կրթությունը պետք է ներառի բնապահպանական գիտելիք [4]: Այլ բնորոշմամբ կանաչ կրթությունը ոչ միայն նոր գիտելիքներով է զինում սովորողներին, այլև ձևավորում է նոր մտածելակերպ՝ հանուն բնության ու մոլորակի պահպանության:

Կանաչ կրթությունը բնության վրա հիմնված ուսուցում է (Nature-based learning), որը, ուսումնական գործընթացում ներառելով կանաչ կրթության տարրերը, նպաստում է շրջակա միջավայրի հետ կապի ձևավորմանը ու գիտակցված պահվածքի դրսևորմանը բնության պահպանության ուղղությամբ:

XIX դարավերջին Եվրոպայում ու ԱՄՆ-ում տարածվեց «Բնության ուսումնասիրության շարժումը» (Nature Study Movement): Այս շարժման նպատակը երեխաների մոտ բնության հանդեպ հետաքրքրություն ու սեր զարգացնելն էր ոչ թե միայն գիտելիքի, այլև հոգևոր ու բարոյական դաստիարակության համար: Միաժամանակ ձևավորվեց նաև պահպանության կրթությունը (Conservation Education), որը կարևորում էր բնության պաշարների խելամիտ օգտագործումը:

XIX դարավերջին Եվրոպայում ու ԱՄՆ-ում տարածվեց «Բնության ուսումնասիրության շարժումը» (Nature Study Movement), որի նպատակը երեխաների մոտ բնության հանդեպ հետաքրքրություն ու սեր զարգացնելն էր ոչ թե միայն գիտելիքի, այլև հոգևոր ու բարոյական դաստիարակության համար:

Կանաչ կրթությունը որպես համաշխարհային շարժում ձևավորվեց XX դարի երկրորդ կեսին, երբ բնապահպանական խնդիրները դարձան համընդհանուր: Ռեյչել Քարսոնի «*Loud qարուն*» (Silent Spring, 1962) գիրքը բացահայտեց քիմիական նյութերի վտանգը բնության ու մարդու առողջության համար: 1970 թ. ապրիլի 22-ին առաջին անգամ նշվեց Երկրի օրը (Earth Day), որին մասնակցեցին միլիոնավոր մարդիկ: Նույն թվականին պրոֆեսոր Վիլյամ Բ. Սթափը առաջին անգամ ձևակերպեց «բնապահպանական կրթության» հասկացության սահմանումը՝ շեշտելով համայնքային մասնակցությունն ու բնապահպանական խնդիրների լուծումը:

Այսպիսով՝ կանաչ կրթության գաղափարը ծնվեց որպես մարդու ու բնության ներդաշնակ կապի փնտրտուք, բայց ժամանակի ընթացքում վերածվեց համաշխարհային կրթական շարժման: Ներկայումս այն ոչ միայն բնապահպանական գիտելիքների ուսուցումն է, այլև նպատակաուղղված է զարգացնելու սովորողների մտածելակերպը՝ ձևավորելով պատասխանատվության զգացում մոլորակի ու բնության հանդեպ ու ամուր հիմք դնելով ապագայի կառուցմանը:

Հիմնախնդիրը: Կանաչ կրթության հիմնական նպատակը դեպի բնություն մարդկանց վերաբերմունքն ու վարքը փոխելն է՝ ձևավորելով գիտակցություն, որը

կնպաստի կայուն զարգացմանը: Սակայն նշված նպատակի իրականացման ճանապարհին առաջանում են մի շարք խնդիրներ, որոնց թվում են արժեքահավասար- գային խնդիրը, կրթական համակարգում միջգիտակարգային մոտեցումների, ուսումնական նյութերի ու մեթոդների պակասը, ուսուցիչների պատրաստվածու- թյան խնդիրը, ֆինանսավորման պակասն ու հասարակության մասնակցության ցածր մակարդակը:

Բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, կանաչ կրթության առնչվող ֆինանսավորման աղբյուրները քիչ են, նաև կարիք կա պետական կայուն ռազմավարության: Բազմաթիվ ուսուցիչների վերապատրաստելու անհրաժեշ- տություն կա, որ վերջիններս կարողանան զարգացնել համապատասխան հմտու- թյուններ՝ ներառելու կանաչ կրթության բաղադրիչները ուսումնական գործընթա- ցում: Ըստ այդմ՝ կլրացվի նաև ուսումնական նյութերի ու մեթոդների պակասը: Կանաչ կրթության բաղադրիչների ներկառուցումը ուսումնական նյութերում ու բոլոր առարկաներում պահանջում է միջառարկայական մոտեցում:

Այսպիսով՝ կանաչ կրթության հիմնախնդիրն այն է, որ դեռևս չի դարձել կրթա- կան համակարգի անբաժանելի մաս ու դեռ չի ապահովում վարքային փոփոխու- թյուն դեպի բնապահպանություն ու կայուն ապրելակերպ:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակու- թյունների վերլուծություն: Կանաչ կրթության ակունքները հասնում են մինչև XVIII դարի լուսավորական դարաշրջան, երբ եվրոպական մտածողները սկսեցին շեշտել մարդու ու բնության փոխկապվածությունը: Ժան-ժակ Ռուսոն իր *«Էմիլ կամ դաս- տիարական մասին»* (1762) գրքում նշում էր, որ երեխային պետք է սովորեցնել ոչ թե գրքերից, այլ բնությունից՝ դիտարկելով, ուսումնասիրելով ու ապրելով բնու- թյանը հաղորդակից ու նրա հետ ներդաշնակ: Հենց այս գաղափարն էլ ընկած է կա- նաչ կրթության առանցքում:

Կանաչ կրթության գաղափարներն ամրապնդվեցին մի շարք միջազգային հռչակագրերով ու միջոցառումներով, որոնց թվում՝ 1972 թ. Ստոկհոլմի համաժո- դովը, երբ ՄԱԿ-ը հայտարարեց, որ կրթությունը պետք է նպաստի բնապահպա- նական խնդիրների լուծմանը, 1975 թ. Բելգրադի խարտիան ձևակերպեց բնապահ- պանական կրթության նպատակներն ու սկզբունքները:

1977 թ. Թբիլիսիի հռչակագիրը (UNESCO) կանաչ կրթության հիմնադիր փաս- տաթուղթն է. այն սահմանեց բնապահպանական կրթության նպատակները, սկզբունքներն ու մոտեցումները, որոնք այսօր էլ արդիական են:

1980-ական թվականներից կանաչ կրթությունը ընդլայնվեց՝ ընդգրկելով նաև կայուն զարգացման գաղափարը, որը ամրապնդվեց 1987 թ. Բրունդալանդի զե- կույցով: Կայուն զարգացումը ձևակերպվեց «որպես զարգացում, որը չի սպառում ապագա սերունդների հնարավորությունները» [3]:

1992 թ. Ռիո դե Ժանեյրոյի Երկրային գագաթնաժողովը (Earth Summit) ընդու- նեց «Agenda 21» ծրագիրը, որում կրթությունը ներկայացվեց որպես կայուն զար- գացման առանցքային գործիք:

Հողվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է մեթոդաբանորեն սահմանել կանաչ կրթության առանձնահատկությունները, կանաչ բաղադրիչների ներդրման անհրաժեշտությունը ուսումնական գործընթացում՝ ընդգծելով ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները ու առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

Հետազոտության նորույթը: Վեր են հանվել կանաչ կրթության առանձնահատկությունները ուսումնական գործընթացի համատեքստում:

Հիմնական նյութի շարադրանքը: Կանաչ կրթությունը կամ կայուն զարգացման կրթությունը մոտեցում է, որը միավորում է գիտելիքը, արժեքներն ու գործնական հմտությունները՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանությանն ու պատասխանատու հասարակության ձևավորմանը: Դրա հիմքում այն գաղափարն է, որ մարդը ոչ թե բնությունից առանձնացված արարած է, այլ նրա մի մասնիկը, բաղկացուցիչ մասը, իսկ ուսումնական գործընթացը պետք է նպաստի այդ կապի խորացմանը:

Ուսուցման սկզբունքները արտացոլում են ուսուցման գործընթացի էությունը, իսկ կանոնները՝ դրա անհատական կողմերը: Կանաչ կրթության հիմնական սկզբունքներն են՝

1. բնապահպանական մտածողության ու վարքագծի ձևավորման սկզբունք,
2. միջառարկայական համապարփակ մոտեցում,
3. սովորողների ակտիվություն, գործնական մասնակցության ապահովում,
4. համագործակցության սկզբունք,
5. արժեհամակարգային ու բարոյական սկզբունքներ:

Վերոնշյալ սկզբունքների կիրառման հստակ բանաձևեր չկան: Մանկավարժի խնդիրն է ընտրել մեթոդական այնպիսի համակարգ, որը կբխի իրականացվող գործունեության նպատակներից:

Սոցիալական յուրաքանչյուր գործընթաց ենթադրում է մարդկանց որոշակի փոխազդեցություն: Ուսուցումն էլ նպատակաուղղված ու կազմակերպված փոխազդեցություն է, որի բնույթը պայմանավորված է այդ փոխազդեցության ձևով ու բովանդակությամբ: Կանաչ ծրագրերի ինտեգրումը պահանջվում է կրթական բոլոր ծրագրերում՝ նախադպրոցական տարիքից մինչև բարձրագույն կրթություն: Նախագծային, հետազոտական աշխատանքները, բնության հետ շփումը, փոխգործուն մեթոդների, համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը կանաչ կրթության իրականացման հիմնական բանաձևերն են:

Ուսումնական պարապմունքները կազմակերպվում են այնպես, որ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր սովորողները զբաղված լինեն միևնույն խնդրով: Ուսումնական տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Սովորողների միջև կազմակերպվում է արդյունավետ փոխազդեցություն, ինչն էլ հենց փոխգործուն մեթոդի հիմնական գաղափարն է: Համագործակցային ուսուցման պայմաններում սովորողների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները ստեղծվում են տարբեր հնարքների

ու մեթոդների միջոցով, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Փոխազդեցության ու փոխուսուցման կարելի է հասնել այն դեպքում, երբ սովորողները փոխհարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի, փոխօգնության ու փոխըմբռնման վրա [5]:

Համագործակցային սկզբունքն էլ հիմնված է սովորողների համատեղ գործունեության հիման վրա և բնորոշվում է որպես խմբային աշխատանքի առավել բարձր աստիճան, որը հնարավորություններ է ընձեռում ուսումնական բազմաբնույթ նպատակներին հասնելու համար [1]:

Ուսուցման վերոնշյալ տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է կանաչ կրթության հայեցակարգի մշակմամբ, որը հիմք կդառնա առարկայական ծրագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար՝ հիմնավորելով ու հստակեցնելով կանաչ բաղադրիչի ներդրման անհրաժեշտությունը.

1. այն ի՞նչ արժեքներ է ձևավորում սովորողների մեջ,
2. ի՞նչ գիտելիքներ ու հմտություններ են անհրաժեշտ՝ բնապահպանություն, ռեսուրսների խնայողություն, բնության նկատմամբ պատասխանատվություն, կայուն ապրելակերպ և այլն:

Կանաչ կրթության հայեցակարգի հաստատումից հետո հաջորդ քայլը ուսումնական ծրագրերի վերլուծությունն է: Առկա ծրագրերը գնահատելով՝ անհրաժեշտ է պարզել՝ առարկայական որ ծրագրերն են ներառում բնապահպանական թեմաներ, այնուհետև՝ ներդնել միջառարկայական նոր կապեր, այսինքն՝ որոշ դեպքերում խորացնել այդ կապերը, երբեմն էլ նոր տարրեր ավելացնել:

Կանաչ բաղադրիչը ուսումնական ծրագրեր ներդրվում է որպես համընդհանուր մոտեցում, ոչ թե որպես առանձին առարկա՝ թեմաների մեջ ընդգրկելով կայունության գաղափարը, զարգացնելով քննարկումներ պատճառահետևանքային կապերի, բնության ու հասարակության փոխազդեցության մասին, կիրառելով հայտնի օրինակներ՝ ուսումնական նյութն առավել ընկալելի դարձնելու նպատակով:

Ինչպես նշվեց, կանաչ կրթությունը պահանջում է գործնական, հետազոտական, համագործակցային մոտեցումներ՝ բնապահպանական նախաձեռնություններ, միջգիտակարգային նախագծեր [6]:

Դիտարկենք կանաչ կրթության բաղադրիչների ներդրման ուղիները հայոց լեզվի ուսուցման դասընթացում:

Կանաչ կրթության բաղադրիչ	Ինչպե՞ս ներառել
Արժեքային դաստիարակություն	Քննարկել բնության հանդեպ վերաբերմունքը հայ գրականության, ասացվածքների, առակների միջոցով (օր.՝ Թումանյան, Իսահակյան, Շիրազ):

Միջառարկայական մոտեցում	Լեզվական նյութում ներառել թեմաներ բնության, բնապահպանության, ջրի ու հողի պահպանման մասին:
Խնդրահեն ուսուցում (problem-based learning)	Առաջարկել քննարկումներ, օրինակ՝ «Ինչպե՞ս կարող է լեզուն նպաստել բնապահպանական մշակույթի ձևավորմանը»:
Համագործակցային ուսուցում	Սովորողները կարող են խմբերով ստեղծել փոքրիկ նախագծեր, օրինակ՝ «Բնապահպանական բառարան»:
Ստեղծագործական աշխատանքներ	Խրախուսել էսսեների, բանավոր ելույթների, պաստառների պատրաստում՝ բնության պահպանության թեմայով:
Լեզվական վերլուծություն	Վերլուծել բնությանն առնչվող բառապաշարը, դարձվածքներ, առածներ՝ բացահայտելով դրանց արժեքային իմաստը:

Կանաչ կրթության ինտեգրումը հայոց լեզվի մեթոդիկայի դասընթացում նշանակում է՝

- բնապահպանական գիտակցությունն ու արժեքները դարձնել ուսուցման բովանդակության ու մեթոդների բաղկացուցիչ մաս,
- զարգացնել սովորողների բնապահպանական մտածողությունը, պատասխանատվությունը շրջակա միջավայրի հանդեպ, և
- ցույց տալ, թե ինչպես կարելի է այդ գաղափարները փոխանցել լեզվի միջոցով,
- պատրաստել ուսումնական նյութեր՝ համադրելով թվային մանկավարժության ու բնապահպանական մոտեցումների լավագույն փորձը,
- հայոց լեզվի ուսուցման ծրագրում ինտեգրել ենթաթեմաները թեմատիկ շարադրությունների, գրականության մեկնաբանությունների ու ուսումնագիտական նախագծերի միջոցով,
- անհատական ու համագործակցային գործունեությամբ մշակել դասի պլաններ՝ ընդգրկելով թվային գործիքներ ու կանաչ կրթության բաղադրիչներ:

Որպես վերջնարդյունք սովորողը կկարողանա.

- օգտագործել ժամանակակից թվային գործիքներ՝ իր ակտիվ ներգրավվածությունն ապահովելու և ստեղծագործ աշխատանքներ իրականացնելու նպատակով,
- իմանալ ու կիրառել կանաչ կրթության գաղափարները՝ բնապահպանական մտածողությունը ձևավորելու ու բնության հանդեպ պատասխանատու վերաբերմունքը խթանելու միջոցով:

Կանաչ կրթության բաղադրիչների ներդրումը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ ուսուցիչը գիտակցում է իր *դերը ոչ միայն որպես գիտելիքի փոխանցող, այլև որպես արժեքներ ու վարքագիծ ձևավորող*: Այսինքն՝ այդ բաղադրիչների

ներդրումն անհնարին է առանց մանկավարժի գիտակցված, նախաձեռնող ու արժեքահեն մասնակցության: Մանկավարժից պահանջվում են գաղափարական ու արժեքային պատրաստվածություն, տեղեկացվածություն ու մասնագիտական գիտելիքներ, մեթոդական ճկունություն ու նորարարական մոտեցումներ, միջառարկայական կապերի ստեղծման հմտություններ, գործնական նախաձեռնություն ու համագործակցություն, արդյունքների գնահատման նոր մոտեցումներ, կարճ ասած՝ կանաչ կրթության բաղադրիչների ներդրման հաջողությունը կախված է հենց մանկավարժից: Գիտելիք, արժեք, նորարարական մտածողություն ու գործնական նախաձեռնություն, ամենակարևորը՝ անձնական օրինակ. ահա կանաչ կրթության իրականացման լավագույն բանաձևը: Այն մանկավարժը, որը ապրում է կայուն ու բնապահպանական արժեքներով, իր օրինակով ձևավորում է ապագայի քաղաքացի, որը գիտակցում է իր դերն ու պատասխանատվությունը բնության հանդեպ:

Եզրակացություն

Կանաչ կրթությունը արդյունավետ լուծում է ժամանակի բնապահպանական հիմնախնդիրներին: Կանաչ կրթության բաղադրիչների ներառումը ուսումնական գործընթաց ձևավորում է բնապահպանական դաստիարակություն, սովորողների ակտիվություն, զարգացնում համագործակցային, ճանաչողական հմտություններ, ապա արտահայտվելու հնարավորություն է տալիս սովորողին ուսումնական նյութի յուրացման գործընթացում: Այն նպաստում է սովորողների համագործակցությանը ոչ միայն մանկավարժի, այլև միմյանց հետ:

Ավելի շատ աջակցություն ու գիտելիք փոխանցելով սովորողներին ամենավաղ տարիքից, ուսումնական ծրագրերում ներառելով կանաչ կրթության բաղադրիչներ, սովորողների մոտ ձևավորելով ու զարգացնելով «կանաչ» հմտություններ՝ հնարավոր կլինի կրթել ու դաստիարակել նախաձեռնող, պատասխանատու ու իրազեկ սերունդ, որը մտահոգ է իրեն շրջապատող միջավայրի կայունությամբ: Անհրաժեշտ է ուսումնառության նպատակների ու ծրագրերի նորովի մոտեցում, որի միջոցով կձևավորվի XXI դարի քաղաքացուն անհրաժեշտ կարողունակություններով զինված սերունդ:

Կանաչ կրթության սկզբունքները ձևավորում են համագործակցային միջավայր՝ պայմաններ ստեղծելով ուսուցման արդյունավետության ու հետադարձ կապի համար: Հարկ է նկատել, որ նշված սկզբունքներն ունեն նաև որոշակի սահմանափակումներ՝ պայմանավորված ուսուցման գործընթացում համագործակցային խմբի յուրաքանչյուր անդամի գործունե ընդգրկվածության ապահովման խնդրով ու խմբում սովորողների թվով: Սովորողների ակտիվ մասնակցությունն ապահովելու ու նրանց ինքնարտահայտման հնարավորություն ընձեռելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև համագործակցային խմբի մեծությունը՝ բացառելով մեծ թվով սովորողների ընդգրկումը մեկ խմբում:

Կանաչ բաղադրիչների ներդրումն ուսումնական գործընթացում սկսվում է գաղափարական հստակեցումից, ծրագրային վերլուծությունից, ապա՝ անցնում

մեթոդական ու բովանդակային փոփոխությունների: Նշված քայլաշարը թեև երկարատև գործընթաց է, բայց կարող է հիմնովին փոխել կրթության որակն ու հասարակության բնապահպանական գիտակցությունը: Այլ կերպ ասած՝ կանաչ բաղադրիչների համակարգային ներդրումը ուսումնական միջավայրի կայուն զարգացման պայման է, որը նպաստում է ոչ միայն կրթության որակի բարձրացմանը, կրթական բովանդակության, ուսուցման սկզբունքների վերափոխմանը, այլև բնապահպանորեն մտածող ու սոցիալական պատասխանատվություն կրող սերնդի ձևավորմանը:

CHARACTERISTICS OF GREEN EDUCATION

Hovhannisyan Meri

*PhD in Philology, Associate Professor,
Academic Secretary of YSU,
Yerevan State University,
Republic of Armenia,
meri.hovhannisyan@ysu.am*

Summary

The aim of this research is to define and analyze the characteristics of *green education*, which represents one of the most significant directions in the modern educational system. The objectives of our study are to reveal the essence and advantages of green education, identify the pedagogical challenges that emerge in the learning process, and explore possible ways to address them.

In the comprehensive study of the issues presented within the topic, both general scientific methods – such as logical reasoning – and specific methods – such as analysis and comparison – have been applied.

As a result of the research, we have concluded that *green education* is a unique approach within the educational process. Its goal is to cultivate environmental awareness, responsibility, and a culture of sustainable development. It aims to provide learners not only with theoretical knowledge about nature and the environment but also with values and behaviors that promote environmental protection and the rational use of natural resources.

Green education integrates pedagogy, ethics, science, and civic responsibility toward a healthy and sustainable future. This educational approach is interdisciplinary, encompassing multiple subjects and contributing to the development of critical thinking. It also emphasizes direct contact with nature and engagement in environmental initiatives.

In essence, *green education* is not merely a process of knowledge transmission – it is a foundation for value-based and behavioral transformation, fostering the formation of a sustainable society.

Keywords: *Green education, learning process, environmental knowledge, environmental education, environment, sustainable development, teaching method, collaborative learning, feedback.*

ОСОБЕННОСТИ ЗЕЛЕННОГО ОБРАЗОВАНИЯ

Оганнисян Мери

*Кандидат филологических наук, доцент,
Учёный секретарь ЕГУ,
Ереванский государственный университет,
Республика Армения,
meri.hovhannisyan@ysu.am*

Аннотация

Цель исследования заключается в определении и анализе особенностей *зеленого образования*, являющегося одним из важнейших направлений современной образовательной системы. Задачами нашего исследования являются выявление сущности и преимуществ зеленого обра-

зования, определение педагогических проблем, проявляющихся в учебном процессе, и поиск путей их решения.

В процессе комплексного изучения вопросов, поставленных в рамках темы, применялись как общенаучные (логические), так и специальные методы исследования – анализ и сравнение.

В результате исследования мы пришли к выводу, что *зеленое образование* представляет собой особый подход в учебном процессе, направленный на формирование экологического сознания, ответственности и культуры устойчивого развития. Оно стремится дать учащимся не только теоретические знания о природе и окружающей среде, но и сформировать ценности и поведение, способствующие охране природы и рациональному использованию природных ресурсов.

Зеленое образование объединяет педагогику, этику, науку и гражданскую ответственность за здоровое и устойчивое будущее. Этот образовательный подход является междисциплинарным: охватывая ряд учебных предметов, он способствует развитию критического мышления. Зеленое образование придает особое значение взаимодействию с природой и участию в экологических инициативах.

Таким образом, *зеленое образование* – это не просто процесс передачи знаний, а важная предпосылка и основа для ценностных и поведенческих изменений, способствующих формированию устойчивого общества.

Ключевые слова: *зеленое образование, учебный процесс, экологические знания, экологическое образование, окружающая среда, устойчивое развитие, метод обучения, совместное обучение, обратная связь.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Hovhannisyan A., Harutyunyan K., Khrimyan M., Khachatryan S., Bayatyan N., Aleksanyan L., Purukuru V., Hamagortsakcayin usucum, Yerevan, 2006, ej 29-30. (in Armenian)
2. Y cordineytid risyrch yjenda for neychr-beysd lyring, Hay-qvolyti audtor lyrn, 2022, ej. 29-46.
3. Grosek G., Tiru L.G., Bran R.A., Ejukeyshyn for systeinybl divilopment: evolushyn ynd perspektivs: y biblwmetrrik rivyu of risyrch, 1992-2018, Systeyn. 11 (21), 2019, p. 6136.
4. Копнина Н., Ejukeyshyn for systeinybl divilopment (ESD): dy tyrn yvey from ‘invayrmynt’ in invayrmyntyl ejukeyshyn?, invayryn Eduk Res, 18 (5), 2012, pp. 699-717.
5. Schmak R.A., Schmak P.A., Grup procesis in dy qlasrum, USA, Orejyn, 2000, 11-16, pp. 37-38.
6. Varela-Candamio L., Novo-Corti I., García-Alvarez M.T., Dy inportans of invajrmyntyl in dy ejukeyshyn in dy diterminants of grin biheivr: y meta-analizis yproych C. Jordan, L. Chavla., J Clin Prod, 170, Jan. 2018, pp. 1565-1578.

Получено: 20.10.2025

Рассмотрено: 27.10.2025

Принято: 05.11.2025

Received: 20.10.2025

Reviewed: 27.10.2025

Accepted: 05.11.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License